Կարգապահական գործ թիվ 17068

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 86-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/65

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Արայիկ Պապիկյանին (արտոնագիր՝ 970) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

10.07.2017թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (**այսուհետ նաև՝ Դատարան**) դատավոր Տաթևիկ Գրիգորյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 04.07.2017թ. որոշումը (**այսուհետ՝ Որոշում կամ Դատական սանկցիա**), որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. հունիսի 27-ին՝ ժամը 11:00-ին նշանակված դատական նիստի վերաբերյալ ամբաստանյալ Ներսես Պողոսյանի պաշտպան Արայիկ Պապիկյանը Դատարանի կողմից 14.06.2017թ. ուղարկված ԴԴ18Ե-8420 գրությամբ 19.06.2017թ. պատշաճ տեղեկացվել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին, սակայն նիստին չի ներկայացել, իսկ չներկայանալու հարգելի պատճառների վերաբերյալ որևէ փաստաթուղթ Դատարանին չի ներկայացրել:

Դատարան են ստացվել դատական կարգադրիչ Ս. Նահապետյանի կողմից կազմված անձին զննության ենթարկելու վերաբերյալ արձանագրություններն այն մասին, որ Նահապետյանը ՀՀ դատական օրենսգրքի (**այսուհետ նաև՝ ԴՕ**) համաձայն՝ ցանկացել է զննության ենթարկել Արայիկ Պապաիկյանին, սակայն՝ վերջինս հրաժարվել է:

Դատարանը, խորհրդակցական սենյակում քննության առնելով փաստաբան Արայիկ Պապիկյանի վարքագիծը, որոշել է փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառել դատական սանցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:

Դատարանը շարունակել է գործի քննությունը, որի ընթացքում՝ ժամը 13:17-ին պաշտպան Արայիկ Պապիկյանը ներկայացել է դատական նիստին և կատարել հետևյալ հայտարարությունը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական նիստերի դահլիճ բավականին ուշ եմ մտել, մեր պաշտպանյալը դահլիճում չէ, եթե կարելի է կխնդրեի տեղեկացնել, թե ինչու նա դահլիճում չէ և նրա բացակայության պայմաններում դատարանին ցանկանում եմ հայտնել, որ եթե նա դահլիճում չի գտնվելու, նա մեզ չի լիազորել, ավելին՝ հանձնարարել է իր բացակայության պայմաններում իր պաշտպանության հարցով դատական նիստին չմասնակցել: Եթե նրա ներկայությունը չի ապահովվելու, հետևաբար ես պարտավոր եմ լքել դատական նիստերի դահլիճը, որովհետև նման հանձնարարություն իմ պաշտպանյալն ինձ չի տվել: Եթե չի ապահովվելու, ես ստիպված եմ ներողություն խնդրել և դուրս գալ»:

Դատարանը պարզաբանել է պաշտպան Արայիկ Պապիկյանին, որ ամբաստանյալ Ներսես Պողոսյանի նկատմամբ կիրառվել է դատական սանկցիա, և նա 6 ժամով հեռացվել է դատական նիստերի դահլիճից: Դատարանը պարզաբանել է նաև, որ Պապիկյանի հայտարարությունը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջներին այն մասին, որ պաշտպանն իրավունք չունի ինքնակամ դադարեցնել իր լիազորությունները որպես այդպիսին, պաշտպանը պարտավոր է ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին, մինչև ընդմիջում հայտարարելը, առանց նախագահողի թույլտվության, չլքել դատական նիստերի դահլիճը, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջներն այն մասին, որ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Դատարանը պարզաբանել է, որ օրենքով սահմանված գործառույթների շրջանակներում դատարանն իրականացնում է իր լիազորությունները, իսկ պաշտպանի կողմից դատարանի գործողությունների, որոշումների վերաբերյալ այլ կարծիք ունենալը չի կարող հանդիսանալ առանց դատարանի թույլտվության՝ դատական նիստերի դահլիճը լքելու կամ դատական նիստին չներկայանալու համար:

Դատարանի վերոնշյալ պարզաբանումից հետո պաշտպան Արայիկ Պապիկյանը կատարել է հետևյալ հայտարարությունը. «Շնորհակալություն Ձեր վկայակոչած կարգավորումների համար, սակայն սույն դեպքում դրանք ամենևին էլ չեն վերաբերում իմ պարտականությունների կատարմանը: Սույն գործով ես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով դատավարական կարգավիճակ ստացել

եմ, որովհետև այդպիսի ցանկություն հայտնել է Ներսես Պողոսյանը և ես նրա շահերին հակասող որևէ գործողություն իրավունք չունեմ կատարել: Ինչպես արդեն նշեցի, իմ պաշտպանյալն ինձ հանձնարարել է իր բացակայության պայմաններում չմասնակցել դատական նիստերին, որի վերաբերյալ, հարգելով դատարանին և դատավարության մասնակիցներին, ես հայտնեցի: Ինչ վերաբերում է դատարանի կողմից կիրառված սանկցիային, թեև ամենևին ծանոթ չեմ դատարանի որոշման բովանդակությանը և հիմքերին, ես ենթադրում եմ, որ Ներսես Պողոսյանի նկատմամբ դատական սանկցիա կիրառվել է, հավանաբար, այն պատճառով, որ նա դատական նիստերի դահլիճում եղել է առանց իր պաշտպանների, ենթադրում եմ, որ նա ցանկացել է դատավորից ճշտել, թե ինչու իր պաշտպանները դահլիճում չեն գտնվում: Ղեկավարվելով և հիմք ընդունելով իմ պաշտպանյալի հանձնարարությունը և քանի որ իմ պաշտպանյալը չի գտնվում դատական նիստերի դահլիճում՝ նրա պաշտպանությունն իրականացնելն անհնար է, և ես ստիպված եմ լքել դատական նիստերի դահլիճը»:

Դատարանը պաշտպան Արայիկ Պապիկյանին պարզաբանել է, որ նա իրավունք չունի առանց նախագահողի թույլտվության՝ լքել դատական նիստերի դահլիճը, իսկ Դատարանը նրան թույլ չի տալիս լքել այն, սակայն այդ պարզաբանումից հետ՝ ժամը 13:34-ին, պաշտպան Պապիկյանը լքել է դատական նիստերի դահլիճը:

Դատարանը գտել է, որ 27.06.2017թ. դատական նիստի ժամանակ Արայիկ Պապիկյանն իր դատավարական իրավունքներից օգտվել է անբարեխղճորեն և անհարգելի չի կատարել իր դատավարական պարտականությունները, ինչով անհարգալից վերաբերմունք է դրսևորել դատարանի և դատավարության մասնակիցների նկատմամբ և, հաշվի առնելով այն, որ առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ քրեական գործով դատական նիստերի դահլիճը լքելը դատական նիստի կարգի խախտում է, Դատարանը գտել է, որ փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ պետք է կիրառվի դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 10.08.2017թ. թիվ 233-Ա/ԿԳ-17068 որոշմամբ փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

14.08.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Նվեր Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Դիմողը ներկայացրել է 27.06.2017թ. տեղի ունեցած դատական նիստերի արձանագրության համակարգչային արձանագրման կրիչը:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

16.10.2017թ. նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 16.10.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 05.04.2018թ. ժամը 20:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով ամբաստանյալ Ներսես Պողոսյանի պաշպանն է փաստաբան Արայիկ Պապիկյանը:
- Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 27.06.2017թ.՝ ժամը 11:00-ին նշանակված դատական նիստին Արայիկ Պապիկյանը ներկայացել է ժամը 13:17-ին, հանդես է եկել հայտարարությամբ նշելով, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական նիստերի դահլիճ բավականին ուշ է մտել, իրենց պաշտպանյալը դահլիճում չէ, և տեղեկացնել է տեղեկացնել, թե ինչու նա

դահլիճում չէ և հայտնել է, որ եթե նա դահլիճում չի գտնվելու, նա իրենց հանձնարարել է իր բացակայության պայմաններում իր պաշտպանության հարցով դատական նիստին չմասնակցել: Արայիկ Պապիկյանը հայտնել է նաև, որ եթե նրա ներկայությունը չի ապահովվելու՝ ինքը պարտավոր է լքել դատական նիստերի դահլիճը, որովհետև նման հանձնարարություն իր պաշտպանյալն իրեն չի տվել: Եթե չի ապահովվելու, ինքը ստիպված է ներողություն խնդրել և դուրս գալ: Այնուհետև փաստաբանը հայտնել է, որ ինքը լքում է դատական նիստերի դահլիճը:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործքվ 04.07.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած դատական նիստի արձանագրության ձայնագրառման կրիչով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Արայիկ Պապիկյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 22 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (10 ավարտված վարույթ և 12 ընթացիկ վարույթ), որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական գործը:

Խորհրդի 06.02.2017թ. թիվ ԿԳ/25-Ա, 11.05.2017թ. թիվ ԿԳ/51-Ա, 12.09.2017թ. թիվ ԿԳ/86-Ա, 26.10.2017թ. թիվ ԿԳ/97-Ա, 07.03.2018թ. թիվ ԿԳ/47-Ա, 20.03.2018թ. թիվ ԿԳ/56-Ա որոշումներով Արայիկ Պապիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Խորհրդի 13.02.2018թ. թիվ ԿԳ/14-Ա որոշմամբ Արայիկ Պաիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 13.02.2018թ. թիվ ԿԳ/15-Ա որոշմամբ Արայիկ Պաիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն՝ Կանոնագրքի 3.5.1 ենթակետի և 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 07.03.2018թ. թիվ ԿԳ/48-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 15.03.2018թ. թիվ ԿԳ/51-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 15.03.2018թ. թիվ ԿԳ/52-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար, որոշումն ուժի մեջ մտած չէ:

Խորհրդի 03.04.2018թ. թիվ ԿԳ/60-Ա որոշմամբ Արայիկ Պապիկյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար,որոշումն ուժի մեջ մտած չէ:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արայիկ Պապիկյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար, իսկ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

7.1 Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Այս կանոնը վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է՝*

«(…)

2) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

3) մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը.

4) դատական նիստում պահպանել կարգուկանոն

(…)»:

Նշված կանոններից հետևում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը:

Հետևաբար, այդպիսի վարքագիծ դրսևորած պաշտպանը խախտում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջները:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Փաստաբանի այս երկակի կարգավիճակը բխում է Կանոնագրքի 1.1 ենթակետի պահանջներից, որի համաձայն՝ *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, դատարանի հետ փաստաբանի հարաբերությունների կանոնակարգմանն է նվիրված Կանոնագրքի 4.1 կետը, որը, լինելով բլանկետային իրավադրույթ՝ հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Սույն գործի շրջանակներում իրավական նշանակություն ունեն փաստաբանի հետևյալ դատավարական պարտականությունները՝ ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի՝ տվյալ դեպքում՝ դատարանի կանչով, ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ չլքել դատարանի դահլիճը, եթե չի հայտարարվել ընդմիջում: Սույն պարտականությունների չկատարումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.[1]-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Դա ներառում է նաև փաստաբանի կողմից դատարանի օրինական կարգադրություններին և դատական նիստի սահմանված կարգին անշեղորեն հետևելը՝ այդպիսով դատարանի նկատմամբ

ցուցաբերելով հարգանք, որպիսի պարտականությունը նրա վրա դրված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Հատկանշական է, որ նախկինում Պալատի խորհուրդը դատարանի դահլիճն առանց նախագահողի թույլտվության լքելու փաստաբանի վարքագիծը համարել է Կանոնագրքի դրույթներին հակասող: Այսպես, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան) 16.11.2009թ. թիվ 29/1-Ա որոշմամբ փաստաբան Սեդա Սաֆարյանին ենթարկել է կարգապահական պատասխանատվության, այն բանի համար, որ փաստաբանը ***«..խոչընդոտել է դատական նիստի բնականոն ընթացքը և առանց նախագահողի թույլտվության լքել է դատական նիստերի դահլիճը: Հետևաբար, նրա արարքում առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի և Պալատի կանոնադրության պահանջների խախտման հատկանիշներ:***»:

Խորհուրդը նմանատիպ դիրքորոշում է արտահայտել նաև 23.11.2012թ. թիվ 22-ԿԳ/1-Ա և 22.02.2013թ. թիվ № 7-ԿԳ/1 Ա որոշումներով:

Այս ընդհանուր մոտեցումից, Պալատի խորհուրդը նախկինում շեղվել է միայն այն դեպքերում, երբ արձանագրել է դահլիճը լքելու ծանրակշիռ պատճառներ: Այսպես՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (նախագահող՝ Ռուբեն Սահակյան, զեկուցող՝ խորհրդի անդամ Արա Զոհրաբյան) 12.11.2008թ. թիվ 22/11-Ա որոշմամբ փաստաբաններ Արա Զաքարյանի, Արթուր Գրիգորյանի և Դիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել է, ըստ էության, այն հիմքով, որ՝ նշված քրեական գործով դատավորի ոչ օրինական գործողություններն այլընտրանք չեն թողել փաստաբաններին: Պալատի խորհուրդը նշել է հետևյալը՝ «..***Ինչպես կարող է դատավորը կողմերին ուղարկել որոշում, իսկ դրանից մոտ 50 օր անց, երբ համոզվելով, որ ուղարկված որոշումն իր մեջ լուրջ թերություն է պարունակել, հայտարարել, որ իր մոտ այդ նույն ամսաթվով մեկ այլ որոշում էլ կա, սակայն այլ բովանդակությամբ:.. Դատավորի գործողությունների արդյունքում խախտվում են փաստաբանության անկախության և օրինապահության սկզբունքները: Փաստաբանը ստիպված է լինում դահլիճը լքելու միջոցով առարկել դատավորի ոչ օրինական գործողությունների դեմ***:»: Պալատի խորհուրդը հայտնել է նաև հետևյալ դիրքորոշումը՝ «***Պալատի խորհուրդը միաժամանակ գտնում է, որ փաստաբանները իրավունք չունեն առանց նախագահող դատավորի թույլտվության լքելու դատական նիստերի դահլիճը և պարտավոր են հարգանք դրսևորել դատավորի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ: Այս մոտեցումից շեղումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն, բացառությամբ, երբ առկա կլինեն ծանրակշիռ պատճառներ:»:***

Պալատի խորհուրդը փաստաբան Արայիկ Պապիկյանի՝ դահլիճը լքելու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդ վարքագծի դրսևորման պատճառները:

Ըստ հաստատված փաստերի, փաստաբան Արայիկ Պապիկյանն այդպիսի վարքագիծ է դրսևորել, քանի որ իր պաշտպանյալը հանձնարարություն է տվել

փաստաբան Արայիկ Պապիկյանին, որ վերջինս իր բացակայության պայմաններում չմասնակցի դատական նիստերին: ***Պալատի խորհուրդը կարևոր է համարում սույն որոշմամբ տալ այն հարցի պատասխանը, թե՞ արդյոք նիստին չմասնակցելու (դահլիճը լքելու) վստահորդի հանձնարարությունը օրինական հանձնարարություն է, և արդյո՞ք փաստաբանը պարտավոր էր կատարել այդ հանձնարարությունը:***

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ <u>օրենքով չարգելված բոլոր միջոցներով:</u>*

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է մինչև ընդմիջում հայտարարելը առանց նախագահողի թույլտվության չլքել դատական նիստերի դահլիճը:*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ *«Փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու համար դիմած անձի հանձնարարությունն ընդունելու, եթե՝*

1) այն ակնհայտ անօրինական բնույթ է կրում.

(…)»

Կանոնագրքի 3.1.6 կետի համաձայն՝ *Եթե վստահորդի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա <u>փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:</u>*

Նշված կանոնների համակարգային վերլուծությունից ուղղակիորեն հետևում է, որ քրեական գործով պաշտպանն իրավասու չէ առանց նախագահող դատավորի թույլտվության լքել դատական նիստերի դահլիճը, հետևաբար օրենքով արգելվող այդպիսի վարքագիծ դրսևորելուն ուղղված վստահորդի հանձնարարությունն օրինական չի կարող լինել: Ոչ օրինական հանձնարարությունն ընդունելուց փաստաբանը պարտավոր է հրաժարվել: Փաստաբանն իրավունք չունի և չպետք է վստահորդից այնպիսի հանձնարարություն ընդունի, եթե ի սկզբանե այն հակասում է օրենքին կամ վարքագծի կանոններին:

Վստահորդի ոչ օրինական հանձնարարությունը փաստաբանի համար պարտադիր համարելու դեպքում, փաստաբանը կկորցնի իր անկախությունը և ստիպված կլինի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչն անթույլատրելի է:

Պալատի խորհուրդը եզրակացնում է, որ Արայիկ Պապիկյանի արարքը կատարված է դիտավորությամբ, այսինքն՝ վերջինս գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը:

Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործով դատարանի դահլիճը լքելու ծանրակշիռ պատճառներ փաստաբան Արայիկ Պապիկյանը չի ունեցել, հետևաբար դիտավորությամբ այդպիսի (դահլիճը լքելու) վարքագիծ դրսևորելով խախտել է

Կանոնագրքի 4.1 կետի պահանջը:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Պալատի խորհուրդը՝ հաշվի առնելով վերոհիշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը և փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Արայկ Պապիկյանի նկատմամբ պետք է կիրառել տույժ՝ նկատողության ձևով:

7.2 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն իրավադրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, ելնելով իր իրավապաշտպան գործառույթից, պարտավոր է դրսևորել իր նշված գործառույթով պայմանավորված հասարակական հատուկ կարգավիճակին հարիր ազնիվ վարքագիծ վստահորդի հետ հարաբերություններում և առավելագույն ջանքեր գործադրել իր վստահորդի շահերը բոլոր օրինական միջոցներով պաշտպանելու ուղղությամբ:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում թույլ տալու հանգամանքը:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արայիկ Պապիկյանին (արտոնագիր՝ թիվ 970) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Արայիկ Պապիկյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 970) կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

3. Կարգապահական վարույթը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասով կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

05 ապրիլի 2018թ.
թիվ ԿԳ/65-Ա
ք. Երևան